Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆ

GYUMRI
ARMENIA

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS) Project

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

COMUS
COMMUNITY-LED URBAN STRATEGIES IN HISTORIC TOWNS

ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆ

«Համայնքի կողմից իրականացվող
քաղաքաշինական ռազմավարություններ
պատմական քաղաքներում»
(COMUS) ծրագիր

GYUMRI
ARMENIA

Community-led
Urban Strategies
in Historic Towns
(COMUS) Project

Գյումրի քաղաքի տեղագրական հանույթ,
Հայնախագծի արխիվ
Situation Map of Gyumri town,
Courtesy of ArmProject Archive



Ներածություն	**4**	Introduction
Պատմություն	**6**	History
Տեղական շահառուների խումբ	**14**	Local Stakeholders Group
Համընդհանուր տեսլական	**18**	Shared Vision
Համընդհանուր տեսլականի նպատակներ	**20**	Objectives of the Shared Vision
Նախնական ընտրված գործողություններ	**24|26**	Shortlisted Actions
Ընտրված գործողություններ	**25|27**	Selected Actions
Գյումրու քաղաքային ժառանգության կենտրոնի ստեղծում	**28**	Establishment of Gyumri Heritage Centre
Վարպետաց-Աբովյան-Ռուսթավելի-Շիրազի (Գորկի) փողոցներով պարփակված պատմական թաղամասի վերակենդանացում	**48**	Rehabilitation of Historic District located within Varpetats-Abovyan-Rustaveli-Shiraz (Gorky) streets in Gyumri

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիրը Եվրամիության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող և Եվրամիության արևելյան գործընկերության մշակութային ծրագրի մաս հանդիսացող ծրագիր է, որը, ըստ էության, Կիևյան նախաձեռնության՝ «Մշակութային ժառանգության վերականգնումը պատմական քաղաքներում» պիլոտային ծրագրի շարունակությունն է: Ծրագրի գործառույթներն իրականացվում են 2015 թվականի հունվարի 1-ից ծրագրի անդամ երկրներում՝ Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս: Ծրագրի հիմնական գործընկերն է «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» միջազգային կազմակերպությունը (OWHC):

COMUS-ի հիմնական նպատակն է խթանել սոցիալական և տնտեսական զարգացումը՝ ուժեղացնելով մշակութային ժառանգության ռեսուրսները պատմական քաղաքներում: Ծրագիրն ուղղված է մշակելու ժառանգության վրա հիմնված ռազմավարություն, ինչը նպատակաուղղված կլինի պատմական քաղաքի կենտրոնի վերականգնմանը, կխթանի զբոսաշրջությունը և տնտեսական զարգացումը:

Գյումրին ընտրվել է COMUS-ի պիլոտային քաղաք և 2015 թվականից «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» միջազգային կազմակերպության դիտորդ անդամ է:

INTRODUCTION

An essential aspect for sustainable urban development is ensuring an active role of communities in decision-making about their own historic towns, and working together with experts and local authorities to realise these decisions.

"Community-led Urban Strategies in Historic Towns" (COMUS) project is a joint initiative of the European Union and the Council of Europe and is part of the Eastern Partnership Culture Programme of the European Union, considered to be the continuation of Kyiv Initiative: Pilot Project on "Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns". The functions of the project have been implemented since January 1, 2015 in member countries of the project - Armenia, Georgia, Ukraine, Republic of Moldova, Belarus. The key partner of the project is the international Organisation of World Heritage Cities (OWHC).

COMUS is focused particularly on promoting social and economic development, enhancing cultural heritage resources in historic towns. The project aims to develop heritage-based strategy that will address restoration of the historic town centre, will boost tourism and economic development.

Gyumri has been chosen as a pilot town for COMUS and since year 2015 it has been an observer member of the international Organisation of World Heritage Cities.

Գյումրի (նախկին Ալեքսանդրապոլ) քաղաքի գլխավոր հատակագիծ 1845 թ.
Master Plan of Gyumri (previously Aleksandrapol) town, 1845



ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գյումրին Հայաստանի Հանրապետության՝ մեծությամբ երկրորդ քաղաքն է՝ 157'332 բնակչությամբ: Այն գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում՝ Ախուրյան գետի ձախ ափին: Քաղաքը ավտոճանապարհներով կապվում է Վրաստանի և Թուրքիայի հետ: Աշխարհագրական նման դիրքը մշտապես նպաստել է Գյումրու՝ որպես տնտեսական և մշակութային խոշոր կենտրոնի զարգացմանը:

Գյումրու հնագույն անվանումը Կումայրի է, որի մասին հիշատակված է Քսենոֆոնի «Անաբասիս» աշխատությունում:

HISTORY

Gyumri is the second largest town of the Republic of Armenia, with population of 157'332 people. It is located in the North-West of Armenia, on the left bank of Akhuryan River. Highways connect the town with Georgia and Turkey. Gyumri's geographical position has favoured its development' as a major economic and cultural centre.

The ancient name of Gyumri is Kumayri, which is mentioned by Xenophon in his famous work "Anabasis".

Քաղաքի բուռն վարգացման նշանակալի շրջանն է եղել 19-րդ դարը, երբ Ռուսական կայսրության կազմի մեջ ներգրավվելուց հետո այն դառնում է Հարավային Կովկասի առևտրական, արդյունաբերական, մշակութային խոշորագույն կենտրոն: Խորհրդային Միության ժամանակաշրջանում Գյումրին վերածվում է խոշոր տեքստիլ և սննդարդյունաբերական քաղաքի: Գտնվելով սեյսմիկ ակտիվ գոտում՝ Գյումրին 20-րդ դարում երկու անգամ՝ 1926 և 1988 թթ., ենթարկվել է աղետալի երկրաշարժերի: Վերջինը հիմնովին կործանեց քաղաքի բնակֆոնդը, կրթական ու մշակութային օջախները, արդյունաբերական համակարգը:

Գյումրին աչքի է ընկնում բազմադարյա մշակութային հարուստ ժառանգությամբ:

19th century was a significant period of rapid development of the town, when, having joined the Russian Empire, it became the largest commercial, industrial, and cultural centre of the South Caucasus. In the Soviet Union times Gyumri developed into a large textile manufacturing and food processing town. Located in an active seismic zone, in the 20th century, in 1926 and 1988, Gyumri was twice hit by devastating earthquakes. The second earthquake completely destroyed the housing stock of the town, its educational and cultural centres, and the industrial system.

Բագրատունյաց (նախկին Լենինի) հրապարակ Գյումրիում (նախկին Լենինական), 1920-30-ական թթ., Ռուսաստանի Դաշնության պետական կինոֆոտո արխիվ
Square of Peace (previously Lenin) in Gyumri (previously Leninakan) town 1920-30s, Courtesy of State Archive of Film and Photo of Russian Federation

Հյուրանոց Լենինական (Գյումրի) քաղաքի գլխավոր Վարդանանց (նախկին Ստալինի) հրապարակում, 1930-ական թթ., լուսանկարը տրամադրել է «Կումայրի» արգելոց-թանգարանը
Leninakan Hotel located on Gyumri' main Vardanants (previously Stalin) Square, 1930s, Courtesy of "Kumayri" Museum-Reserve

Քաղաքում և նրա շրջակայքում պահպանվել են հայ միջնադարյան ճարտարապետության փառահեղ կոթողներ, սակայն Գյումրու մշակութային ժառանգության առանձնահատկությունն է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կառուցված հուշարձանների առկայությունը: Գյումրու դիմագիծը հանդիսացող այս հուշարձաններն այսօր կազմում են քաղաքի պատմական միջուկը: Այս շրջանում կառուցված քաղաքատիպ բնակելի շենքերը՝1-2 հարկանի, սև սրբատաշ, տուֆակերտ, աչքի են ընկնում ճակատների կատարման բազմազանությամբ և առանձնանում ճարտարապետական ուրույն ոճով:

1988 թ. երկրաշարժի հետևանքների դանդաղ վերականգնումը, Թուրքիայի Հանրապետության հետ միջպետական

Gyumri is distinguished by its centuries-old rich cultural heritage. Magnificent monuments of medieval Armenian architecture have been preserved in the town and its neighbourhood, yet the singularity of Gyumri's cultural heritage is more valuable for the monuments built late in the 19th and early in the 20th century. These monuments, which are the face of Gyumri, form its historic core. 1-2 storied black, urban residential buildings of polished tuff are distinguished by diversity of facades and unique architectural style.

A slow recovery after the earthquake of 1988 and the closed interstate border with the Republic of

սահմանի և Գյումրի-Կարս երկաթուղու, ինչպես նաև մայրուղու փակ լինելը ներկայում խնդիրներ են առաջացնում քաղաքի տնտեսական զարգացման համար, սակայն ՀՀ կառավարության կողմից ներկայացված՝ քաղաքը տարածաշրջանային նշանակության տեխնոքաղաքի վերակազմավորելու հայեցակարգի և «Կումայրի» արգելոց-թանգարանի վերագործարկման նախագծի իրականացումը կխթանի քաղաքի տնտեսության և մշակութային կբոսաշրջության կայուն զարգացումը:

Turkey, as well as Gyumri-Kars railway and the highway, currently hinder economic development of the town, but implementation of the RA government's concept of transforming Gyumri into a technological town of regional significance and the project of re-launching "Kumayri" Reserve-Museum area will boost sustainable development of the town's economy and cultural tourism.



Դրվագ Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծից, հեղինակներ՝ Ս. Քալաշյան և ուրիշներ, 2005 թ., Հայնախագծի արխիվ
Fragment of Gyumri Master Plan, Authors: S. Kalashyan and others, 2005, ArmProject Archive

Ձիթողցյանների տուն, այժմ՝ Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան, կառուցված 19-րդ դ., լուս.՝ Զ. Սարգսյանի
Dzitoghtsyan House, currently Gyumri Museum of National Architecture and Urban Life built in 19th c., Photo by Z. Sargsyan

ՏԵՂԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՒՄԲ

COMUS ծրագրի տեղական շահառունե-
րի խումբը ստեղծվել է ծրագրի ղեկավարի՝
կարողությունների քարտեզագրման և ավ-
գային համակարգողի հետ իրականացրած
հարցումների ու հարցազրույցների միջոցով
և դրանց ամփոփման արդյունքում:

Մի շարք հանդիպումների ընթացքում տե-
ղական իշխանություններից, հանրային
դերակատարներից և փոքր ու միջին ձեռնե-
րեցներից բաղկացած խումբը մասնակցել

LOCAL STAKEHOLDERS GROUP

The Local Stakeholders Group of the COMUS project was formed based on the mapping carried out by the Project Officer, through surveys and interviews conducted with the National Coordinator.

In the course of several meetings, the group consisting of local authorities, community activists, small and medium entrepreneurs,

է COMUS-ի պիլոտային քաղաքի ընդհանուր աշխատանքներին: Այն անմիջական ներգրավվածություն է ունեցել հիմնական խնդիրների ձևակերպման, լուծումների փնտրման, համընդհանուր տեսլականի ու դրա նպատակների սահմանման աշխատանքներին, ինչպես նաև քաղաքի՝ կոնկրետ ժառանգությանը միտված վերականգնման գործողությունների մշակմանը: Ծրագրային փուլերի ընթացքում խմբի նախնական և վերջնական ընտրությամբ սահմանվել են այն գործողությունները, որոնց վերաբերյալ մշակվել են Նախնական տեխնիկական գնահատումներ և Իրագործելիության ուսումնասիրություններ:

took part in the general activities related to the COMUS pilot town. The group was directly involved in formulation of basic problems, search for solutions, identification of the shared vision and objectives, as well as development of the actions aimed at restoration of the town's heritage. During the project stages, by preliminary and final selection of the group, those actions were defined for which Preliminary Technical Assessments and Feasibility Studies were developed.

Բնակելի տուն Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
House in Gyumri, Photo by R. Ishkhanyan

Քանդակագործ Ս. Մերկուրովի տուն-թանգարանը՝ կառուցված 19-րդ. դ., լուս.՝ Ռ. Իշխանյանի
S. Merkurov Memorial-Museum built in 19th c., Photo by R. Ishkhanyan

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԼԱԿԱՆ

Մշակված Տեղական շահառուների խմբի կողմից

Գյումրին իր պատմությամբ և առկա մշակութային ներուժով քայլեր էր ձեռնարկելու վերագտնել իր երբեմնի դերը սևծովյան տարածաշրջանում՝ դառնալով Հայաստանի «մշակութային մայրաքաղաքը»:

SHARED VISION

elaborated by Local Stakeholders Group

With its history and current cultural potential, Gyumri will be taking steps to regain its former role in the Black Sea region and become the "cultural capital" of Armenia.

Բնակելի տուն Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
House in Gyumri, Photo by R. Ishkhanyan

Համընդհանուր տեսլականի
ՆՊԱՏԱԿՆԵՐ

1 Վերականգնել քաղաքի նախկին դերակատարությունը՝ որպես տրանսպորտային, արդյունաբերական, մշակութային և սպորտային տարածաշրջանային կենտրոնի

2 «Կումայրի» արգելոց-թանգարանում որակյալ քաղաքային միջավայրի ձևավորում՝ առկա պատմական ժառանգության պատշաճ բացահայտման, պահպանման և վերականգնման հիման վրա

3 Պատմական միջուկի մի հատվածում վերակառուցել ամբողջական թաղամաս՝

OBJECTIVES
of the Shared Vision

1 Restore the former role of the town as transport, industrial, cultural, and sports regional centre

2 Establish high-quality urban environment in "Kumayri" Reserve-Museum based on disclosing, maintaining, and restoring the historical heritage

3 Restore a whole district in a part of the historic core, a pilot area, which will serve

պիլոտային գոտի, որն օրինակ կհանդիսանա «Կումայրի» արգելոց-թանգարանի ամբողջ տարածքի վերակառուցման համար

4 Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրավիճակի և փակ սահմանի առկայությունը

5 Քաղաքում առկա գետերի մաքրում և ինտեգրում քաղաքի կանաչապատման համակարգին՝ կիրառելով նորարարական, քաղաքաշինական և բնապահպանական մոտեցումները

as a pattern for rehabilitation of the complete "Kumayri" Reserve-Museum

4 Revealing the identity of the town, taking into account the traditional crafts, humour, existing cultural institutions (museums, music schools, etc.), the Soviet past, post-earthquake situation and closed border for more than quarter centuries

5 Purification of the rivers flowing through the town and their integration with the landscape gardening system of the town, using innovative approaches to urban development and environmental protection.

Փողոց Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Street in Gyumri, Photo by R. Ishkhanyan

ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(որոնց համար մշակվել են Նախնական տեխնիկական գնահատումներ)

1. Գյումրու քաղաքային ժառանգության կենտրոնի ստեղծում
2. Շիրակի 17 հասցեի պատմամշակութային հուշարձանի հարմարեցում արվեստագետների կացարանի համար
3. «Մայր Հայաստան-Սև բերդ» մշակութային այգու վարգացում
4. Վարպետաց-Աբովյան-Ռուսթավելի-Շիրակի (Գորկի) փողոցներով պարփակված պատմական թաղամասի վերակենդանացում
5. Վարպետաց փողոցի պատմամշակութային միջավայրի վերակենդանացում



ԸՆՏՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(որոնց համար մշակվել են նաև Իրագործելիության ուսումնասիրություններ)

1 Գյումրու քաղաքային ժառանգության կենտրոնի ստեղծում

2 Վարպետաց-Աբովյան-Ռուսթավելի-Շիրակի (Գորկի) փողոցներով պարփակված պատմական թաղամասի վերակենդանացում

Դրվագ Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծից, հեղինակներ՝ Ս. Քալաշյան և ուրիշներ, 2005թ., Հայնախագծի արխիվ
Fragment of Gyumri Master Plan, Authors: S. Kalashyan and others, 2005, ArmProject Archive



SHORTLISTED ACTIONS

(for which Preliminary Technical Assessments have been developed)

1. Establishment of Gyumri Heritage Centre
2. Adaptation of 17 Shiraz Street Historical Building as an Artists Residency
3. Redevelopment of "Mayr Hayastan - Sev Berd" Cultural Park
4. Rehabilitation of Historic District located within Varpetats-Abovyan-Rustaveli-Shiraz (Gorky) streets in Gyumri
5. Rehabilitation of Historic-Cultural Environment of Varpetats Street

SELECTED ACTIONS

(for which Feasibility Studies have also been developed)

1 Establishment of Gyumri Heritage Centre

2 Rehabilitation of Historic District located within Varpetats-Abovyan-Rustaveli-Shiraz (Gorky) streets in Gyumri

Գյումրիի համայնապատկեր
Panorama of Gyumri



ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Գյումրու պատմական ժառանգությունը կարևոր դեր է խաղում ոչ միայն գյումրեցիների, այլ նաև հայերի արժեհամակարգում՝ այն կուգորդելով ուրույն ճարտարապետական կառույցների, մշակույթի, սովորույթների հետ, որով հարուստ է Գյումրին: Այն նաև անվանում են արհեստ-

ESTABLISHMENT OF GYUMRI HERITAGE CENTRE

Gyumri's historical heritage plays an important role in the value system not only of Gyumri population, but of all Armenian people, combining it with unique architectural structures, with culture and traditions, which are abundant in Gyumri. It is also called the town of arts and crafts, which

Բնակելի տան դրվագ, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Fragment of a house, Photo by R. Ishkhanyan

Բնակելի տան դրվագ, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Fragment of a house, Photo by R. Ishkhanyan

ների և արվեստների քաղաք, որը հնարավոր չէ շփոթել մեկ այլ վայրի մշակույթի հետ:

Չնայած Գյումրիում գտնվող պատմության թանգարանին կամ պատմությունը ներկայացնող այլ կազմակերպություններին՝ քաղաքի պատմական ժառանգության հավաքագրումը, ուսումնասիրումը և, ամենակարևորը, հանրահռչակումը մնում է բաց: Կարծես բոլորը գիտեն Գյումրվա պատմական ժառանգության մասին, սակայն միևնույն ժամանակ դրա մասին ոչինչ հայտնի չէ թե՛ տեղացիներին, թե՛ արտասահմանցի կբոսաշրջիկներին, իսկ եղած գրականությունը և տեղեկատվությունը սուղ է և ոչ մատչելի: Գյումրեցիներն իրենց պատմության

cannot be confused with the culture of any other place.

In spite of the History Museum of Gyumri or other organisations presenting the towns' history, the collection, study and most importantly promotion of the historical heritage of Gyumri remains unsettled. It seems that everyone knows about historical heritage of Gyumri, but, at the same time, nothing is known about it both to local residents and to foreign tourists, and the available literature and information is scarce and not easily accessible. The people living in Gyumri retell

և մշակույթի մասին պատմում են իրենց նախնիներից փոխանցված պատմություններով, որոնք մեծ մասամբ չեն կարող հավաստի լինել, իսկ պատմական ճարտարապետական կառույցները հիմնականում մեկ են հասել արդեն աղավաղված կամ լրիվ վերացած:

Այդ պատճառով անհրաժեշտ, հրատապ և արդիական է քաղաքի ժառանգության կենտրոնի հիմնումը, որը կկտեղվի Գյումրու պատմական կենտրոնի՝ «Կումայրի» արգելոց-թանգարանի տարածքում տեղակայված մի քանի հուշարձան-շենքերում:

the stories of their ancestors about their history and culture, which, in most cases, cannot be reliable, and most of the historical architectural structures have reached our days distorted or completely destroyed.

Therefore, the establishment of Urban Heritage Centre of Gyumri is necessary, urgent and important. It will be located in several monument buildings in the historic centre of Gyumri in the area of "Kumayri" Reserve-Museum.

Բնակելի տան դրվագ, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Fragment of a house, Photo by R. Ishkhanyan

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրվել են 3 հուշարձան-շենքեր, որոնք կառուցվել են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ Գյումրու ավանդական ճարտարապետությամբ: Այդ շենքերում կենտրոնի տարբեր բաժինների տեղակայումը կնպաստի քաղաքային կյանքի զարգացմանը, նոր աշխատատեղեր կստեղծի, իսկ շենքերը կսկսեն բազմագործառութային աշխատել և շահագործվել, ինչը կնպաստի ոչ միայն կբոսաշրջության ու ենթակառուցվածքների զարգացմանը, այլ նաև

BRIEF DESCRIPTION OF THE PROPOSAL

3 monument buildings have been selected, which were built in the late 19th century and early 20th century, following the pattern of traditional architecture of Gyumri. Locating different parts of the centre in these buildings will contribute to the development of urban life, will create new jobs, and the buildings will be multifunctional and operated, thus not only contributing to development of

Հետիոտն փողոց Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Pedestrian Street in Gyumri, Photo by R. Ishkhanyan

Բնակելի շենք՝ կառուցված 20-րդ դ. սկզբին,
հեղինակ՝ Հ. Քաջաչնունի, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Residential Building built in early 20th c.,
Author: H. Kajaznuni, Photo by R. Ishkhanyan

կբերի շահույթ ու նոր կյանք կտա հուշարձան-շենքերին: Այդ հուշարձան-շենքերը հիմնականում մասնավոր սեփականություն են, սակայն կարելի է առաջարկել սեփականատերերին դրանք պետության աջակցությամբ նպատակային օգտագործել, կամ հանձնել վարձակալությամբ, կամ վաճառել նոր սեփականատերերի, որոնք ցանկություն կհայտնեն հուշարձան-շենքերը օգտագործել համապատասխան նպատակով, շահույթ ստանալ թե՛ իրենց համար, թե՛ պետության (հարկեր վճարելու միջոցով): Սրանով իսկ կենտրոնի ստեղծման գաղափարի շուրջ հավաքված մարդիկ և կազմակերպությունները կստանձնեն կենտրոնի անխափան գործունեությունը, կնպաստեն դրա զարգացմանը և կամուրջ կհանդիսանան հասարա-

tourism and infrastructure, but also earning profit and giving new life to the monument buildings. Most of these monument buildings are private property, but the owners can be offered to use them for the respective target, or to give them for rent, or sell to new owners, who will choose to use the monument buildings for their target, to earn profit for themselves and for the state (by paying taxes). Thus, the people joined by the concept of establishment of the centre will assume responsibility for its smooth operation, will contribute to its development and will serve as a bridge between the

կության և պետության միջև՝ կարգացնելով Գյումրու բնականոն կյանքը:

Կենտրոնի կազմում առաջարկվում է նախատեսել ռեսուրս կենտրոն, հանրության հետ հանդիպումների սենյակներ, ստեղծագործական լաբորատորիա և զբոսաշրջության տեղեկատվական կենտրոն:

Քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնումը երկարաժամկետ գործընթաց է, ինչը ենթադրում է փուլային իրականացում: Առաջարկվում է՝

- իրականացնել տարածքի ուսումնասիրում և չափագրում,
- կատարել հուշարձան-շենքերի և դրանց տարածքների նախագծա-

society and the state, enhancing normal life in Gyumri.

It is planned that there will be a resource centre in the structure of the centre, rooms for meetings with public, a creative laboratory, and information centre for tourists.

Establishment of the Urban Heritage Centre of Gyumri is a long-lasting process, which implies stage by stage implementation. It is proposed to:

- carry out study and measurement of the area;

Բնակելի տուն Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
House in Gyumri, Photo by R. Ishkhanyan

Բնակելի տուն Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
House in Gyumri, Photo by R. Ishkhanyan

յին աշխատանքներ՝ հաշվի առնելով կենտրոնի բաժինների պահանջվող չափորոշիչները,
- իրականացնել վերականգնողական և շինարարական աշխատանքներ,
- կատարել հարդարման աշխատանքներ՝ հաշվի առնելով արտաքին և ներքին լուսավորությունը ու ինժենեռական համակարգերի մոնտաժումը,
- իրականացնել կահավորման աշխատանքներ,
- վինել համապատասխան տեխնիկայով (համակարգիչներ, պատճենահանման սարքեր, սքաներներ, լուսանկարչական ապարատներ, թուղթ և այլն),
- ապահովել կենտրոնի երկարաժամկետ կառավարումը և բնականոն աշխատանքը:

- make the design of monument buildings and their neighbourhood, considering the standards of the centre's sections;
- carry out rehabilitation and construction works;
- carry out decoration works, including external and internal lighting and installation of engineering systems;
- carry out furnishing works;
- supply the centre with respective equipment (computers, copy machines, scanners, photo cameras, paper, etc.);
- ensure long-term management and smooth work of the centre.

Դրվագ Գյումրու պատմական թատրոնից՝
կառուցված 19-րդ դ., լուս.՝ Ռ. Իշխանյանի
Fragment of Historic Theatre of Gyumri built in 19th c.,
Photo by R. Ishkhanyan

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնումը կնպաստի Գյումրու պատմական ժառանգության սոցիալական արժեքի բարձրացմանը: Ծրագրի շնորհիվ քաղաքում գտնվող բազմաթիվ պատմական օբյեկտները գործուն կընդգրկվեն քաղաքային տնտեսության (առևտրի, զբոսաշրջության, ստեղծագործական արտադրության, ավանդական արհեստների և այլ ոլորտների) զարգացման գործընթացում: Սրա շնորհիվ ծրագիրը ձեռք է բերում իրականացման նպատակահարմարության և կայունության անհրաժեշտ մակարդակ:

Ծրագիրը ենթադրում է Գյումրի բնակավայրի բազմադարյա պատմությանը և ձևավորմանը վերաբերող տեղեկության հավաքագրմամբ, վերլուծությամբ զբաղվող կառույցի ստեղծում: Այն կզբաղվի տարբեր սոցիալական

SIGNIFICANCE

Establishment of the Urban Heritage Centre of Gyumri will help to enhance the social value of historical heritage of Gyumri. Thanks to the project, the numerous historic buildings of the town will be efficiently involved in the process of development of the urban economy (trade, tourism, creative industry, traditional crafts, and other sectors). Therefore, the project acquires the necessary level of implementation advisability and sustainability.

The project aims to establish an institution to collect and analyse the information related to the centuries-old history



նախաձեռնությունների, քաղաքի հետ կապված արժեքային և մշակութային նոր պատումների, ինչպես նաև կբոսաշրջության հետ կապված նոր նախաձեռնությունների ստեղծմամբ:

Կենտրոնը կաջակցի պատմական շենքերում բնակվող քաղաքացիներին մասնակցելու և ներգրավված լինելու հուշարձան-շենքերի և պատմական արգելոցի գոտում տեղի ունեցող իրադարձություններին, կնպաստի այդ ոլորտում գործող պետական և ոչ պետական դերակատարների մտադրությունների և գործողությունների համախմբմանը և համակարգմանը:

and formation of Gyumri settlement. It will deal with various social initiatives, new value and cultural narratives concerning the town, as well as creation of new tourism-related initiatives.

The centre will support participation and involvement of the people living in the historical buildings in the events happening around the monument buildings and the historical reserve area, will contribute to consolidation and coordination of the intentions and actions of state and non-state participants of the field.

Բնակելի տուն Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
House in Gyumri, Photo by R. Ishkhanyan

Փողոց Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Street in Gyumri, Photo by R. Ishkhanyan



ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կենտրոնի հիմնմամբ կվերարժևորվի քաղաքային ժառանգությունը, որի ուսումնասիրման և հանրահռչակման մասնագիտական աշխատանքները կդառնան հասանելի և հասկանալի՝ իրենց հերթին նպաստելով ժառանգության պահպանությանն ու կբոսաշրջության կարգացմանը:

Անհրաժեշտ ֆինանսավորում՝ 1'540'498'000 դ (2,906,600 €)

Տևողություն՝ 2 տարի

RESULTS

The Gyumri Urban Heritage Centre will bring a new dimension into urban heritage preservation, through popularising valuable assets and rendering preservation policies and methodologies. The focus will primarily be on the local community, and also for professionals and tourists.

Necessary funding: 1'540'498'000 դ (2,906,600 €)

Duration: 2 years

ՎԱՐՊԵՏԱՑ-ԱԲՈՎՅԱՆ-ՌՈՒՍԹԱՎԵԼԻ-ՇԻՐԱՋԻ (ԳՈՐԿԻ) ՓՈՂՈՑՆԵՐՈՎ ՊԱՐՓԱԿՎԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ

Վարպետաց-Աբովյան-Ռուսթավելի-Շիրազի (Գորկի) փողոցներով պարփակվող թաղամասը գտնվում է Գյումրի քաղաքի կենտրոնական հատվածում և «Կումայրի» արգելոց-թանգարանի մի մասն է: Այստեղ տեղակայված են Սբ Նշան եկեղեցին, որն ուխտատեղի է հավատացյալների համար, Մ. Մկրտչյանի թանգարանը, որտեղ պահվում և ցուցադրվում են հայ մեծանուն դերասանի կյանքին ու գործունեությանը վերաբերող նյութեր, այն քաղաքի բնակչության ու հյուրերի ամենասիրելի և այցելվող վայրերից մեկն է: Թաղամասում առկա են հինգ հուշարձան բնակելի տներ, որոնք կառուցվել են 19-20-րդ դդ. Գյումրու ավանդական ժողովրդական տների ոճով, որոնցից մեկը Աբովյան 41 հասցեում կառուցվել է որպես միջնակարգ օրիորդաց դպրոց: Թաղամասում հուշարձան բնակելի տների կողքին նորակառույց բնակելի տներ կան, որոնք հավանաբար կառուցվել են հին տների հիմքի վրա:

REHABILITATION OF HISTORIC DISTRICT LOCATED WITHIN VARPETATS-ABOVYAN-RUSTAVELI-SHIRAZ (GORKY) STREETS IN GYUMRI

The district enclosed in Varpetats-Abovyan-Rustaveli-Shiraz (Gorky) streets is located in the centre of Gyumri and is a part of "Kumayri" Reserve-Museum. Here you can find the Holy Sign Church, which is a place of pilgrimage for believers, Mher Mkrtchian's Memorial-Museum, which houses exhibits connected with the life and work of the great Armenian actor and is one of the most favourite and most frequently visited places for the population and guests of the town. There are five listed monument residential buildings in the district, built in 19th-20th centuries centuries following the traditional folk style of Gyumri houses, one of which located at 41 Abovyan Street was built as a secondary school for girls. In the district, next to the monument residential buildings, there are newly built residential buildings, which were probably constructed on the foundations of old buildings.

Բնակելի տան դրվագ, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Fragment of a house, Photo by R. Ishkhanyan

Բնակելի շենք՝ կառուցված 20-րդ դ. սկզբին,
լուս.՝ Ռ. Իշխանյանի
Residential Building built in early 20th c.,
Photo by R. Ishkhanyan

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թաղամասը պատմական և մշակութային նշանակություն ունի, որտեղ կառուցվել են հասարակական և բնակելի կառույցներ՝ Գյումրվա ավանդական ճարտարապետական տարրերով: Այստեղ են գտնվում Գյումրու ավանդական ճարտարապետության նմուշները՝ ժողովրդական բնակելի տներ, հասարակական շենքեր՝ թանգարան և օրիորդաց դպրոց, եկեղեցի՝ հարուստ ու վուսպ վարդաքանդակներով, որոնք ունեն նաև գեղագիտական, հոգևոր, կրթական և մշակութային նշանակություն: Շինությունների կառուցման մեջ օգտագործվել են սև, երբեմն նաև կարմիր տուֆի համադրությամբ շարվածքները, նուրբ ու կլիմային դիմակայուն փայտյա պատշգամբները, պատուհանները, դռները, ինչպես նաև մետաղե յուրահատուկ դարպասները: Այստեղով է անցել «Գյումրի-չայ» ջրհավաքը: Այս թաղամասով են սլացել նաև Գյումրու համար խորհրդանշական և ինքնատիպ ֆայտոնները, որոնց պատրաստման արհեստը այսօր մոռացության է մատնվել:

SIGNIFICANCE

The district has historical and cultural significance, with public and residential buildings and traditional architectural elements of Gyumri. Here are samples of the traditional architecture of Gyumri, such as folk dwelling houses, public buildings - a museum and a girls' school, a church with rich and restrained ornaments, which have also aesthetic, spiritual, educational, and cultural significance. The buildings were constructed using black, sometimes also red tuff stone combination, refined and climate resilient wooden balconies, windows, doors, and unique metal gates. Here passed the "Gyumri-Chai" collector. The unique phaetons symbolic for Gyumri rushed along this district; the craft of constructing such phaetons has been condemned to oblivion.

Աբովյան և Շիրազի (Գորկու) փողոցներին հարող անկյունային շենքը, ընդգրկված չլինելով անշարժ հուշարձանների պետական ցանկում, ունի թե՛ ճարտարապետական և թե՛ պատմական արժեք: Երկհարկանի կառույց է՝ շարված տուֆ քարով, իսկ գլխավոր ճակատները սվաղված են կրավակով. այն ունի հարկաբաժիններն իրարից անջատող բարդ տրամատավոր քիվ: Առաջին հարկաբաժնի ճակատը մշակված է հորիզոնական ակոսներով: Բակի կողմից կառույցն ունի նաև փայտե ավանդական պատշգամբներ:

Թաղամասի նրբանցքում են տեղակայված երեք շինություններ, որոնք նույնպես ընդգրկված չեն պետական ցանկում, սակայն դրանց ճարտարապետության մեջ արտացոլված են Գյումրվա բնակելի տան բոլոր հատկանշական տարրերը: Կառույցները բնակեցված են և սեփականատերերի ջանքերով պահպանվում են անխաթար՝ առանց լրակառույցների և տեսքի աղավաղումների:

The corner building adjacent to Abovyan and Shiraz (Gorky) streets isn't on the state list of monuments, but has both architectural and historical value. It's a two-storey structure built with tuff stone, and the main facades are plastered with gravel. The building has a complex cornice separating its floors. The facade of the first floor is designed with horizontal furrows. From the side of the yard the building has also traditional wooden balconies.

There are three buildings in the blind alley of the district, which are not on the state list either, but their architecture reflects all the typical elements of dwelling houses in Gyumri. The buildings are inhabited and with the efforts of their owners they are maintained intact, without any structural additions and disturbance of appearance.

Հետիոտն փողոց Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Pedestrian Street in Gyumri, Photo by R. Ishkhanyan

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հուշարձանի նորոգումն ու ամրակայումը պետք է հիմնվի հուշարձանի՝ մշակութային արժեքի լավագույնս անխաթար և ճշգրիտ վերակերտման քաղաքականության հենքի վրա: Անհրաժեշտ է պահպանել կառույցների քարատեսակը նյութագիտական լաբորատոր ուսումնասիրությունների 8 արդյունքների հիման վրա՝ կապակցող շաղախի տեսակ, կառույցի ճարտարապետական ձևերի անխաթարություն, կոնստրուկտիվ լուծումների՝ տվյալ ժամանակաշրջանի տեխնոլոգիաներ, սկզբնական գործառույթների վերականգնում կամ, դրանք վերափոխելու դեպքում, հատակագծային նախնական լուծումների խստագույնս պահպանում:



Փողոց Գյումրիում, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Street in Gyumri, Photo by R. Ishkhanyan

BRIEF DESCRIPTION OF THE PROPOSAL

Restoration and reinforcement of the monument should be based on the policy of the best intact and accurate preservation of the cultural value of the monument. It is necessary to maintain the stone type of the buildings, based on the 8 results of material-scientific laboratory studies the type of the cement solution, firmness of the architectural forms of the building, technologies of constructive solutions of the respective time period, restoration of the initial functions, or, in case of changing them, strict observance of the initial planning solutions.

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Թաղամասի վերակենդանացումն ու պատշաճ կառավարումը կարող է խթան համարվել նմանատիպ պատմական միջավայրերի պահպանությանը Գյումրիում և առհասարակ Հայաստանում: Այն կնպաստի աշխատատեղերի ստեղծմանն ու երիտասարդների ստեղծագործելուն, հուշարձանների վերօգտագործմանն ու հանրահռչակմանը, ինչպես նաև կվարգացնի կբոսաշրջային ենթակառուցվածքները:

Անհրաժեշտ ֆինանսավորում՝
2'932'184'720 դ (5,532,424 €)

Տևողություն՝ 3 տարի

RESULTS

Rehabilitation and proper management of the district might serve as incentive for preservation of similar historical sites in Gyumri and Armenia. It will stimulate creating of new jobs, creativity of the young people, reuse and popularisation of monument-buildings, as well as development of tourism infrastructures.

Necessary funding: 2'932'184'720դ (5,532,424 €)

Duration: 3 years

Բնակելի տան մուտք, լուս.՝ Ռ. Իշխանյանի
Door of a residential house,
Photo by R. Ishkhanyan

Ազգային համակարգող Գոհար Գրիգորյան
Ծրագրի ղեկավար Սարհատ Պետրոսյան

Գյումրու ԾԻԳ-ի ղեկավար Հովհաննես Սահակյան
Գյումրու ՏՇԽ համակարգող Աննա Մարտիրոսյան
Գյումրու ԾԻԳ-ի փորձագետներ Աշոտ Միրզոյան
Գայանե Նավլուխանյան
Լուսինե Իգիթյան
Միջազգային փորձագետ Ալեքսանդրա Քրուս

Ձևավորումը INFOGRAPHICS.AM

Հրատարակությունը պատրաստվել է ԵՄ և ԵԽ համատեղ «Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություն պատմական քաղաքներում» (COMUS) ծրագրի շրջանակում: Դրա բովանդակությունը կարող է և չներկայացնել Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետը:

This publication was published in the framework of the Joint Project of EU and CoE "Community-led Urban Strategies in Historic Towns" (COMUS). The content does not necessarily represent the official position of the European Union and/or Council of Europe.

National Coordinator Gohar Grigoryan
Project Officer Sarhat Petrosyan

Gyumri PIU Manager Hovhannes Sahakyan
Gyumri LSG Coordinator Anna Martirosyan
Gyumri PIU Experts Ashot Mirzoyan
Gayane Nazlukhanyan
Lusine Igityan
International Expert Alexandra Kruse

Design by INFOGRAPHICS.AM